Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 28-06-2022 թ. որոշմամբ
««ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ԽՃՈՒՂԻ 8/8
1.3 Պետական գրանցման համարը		222.160.1010096
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2002-12-13
1.5 ՀՎՀՀ-ն		00007386
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)91180504
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		http://www.genocide-museum.am/
1.8 Էլեկտրոնային փոստը		info@genocide-museum.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Հարություն Մարության		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	82	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Գիտական և գիտատեխնիկական գործունեության ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտի պահպանում	200,424,400
	Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային/թեմատիկ/ հետազոտություն	6,441,080
	Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ	3,150,000

	Ասպերանտական կրթաթոշակներ	2,087,700
	Բարձր արդյունավետության գիտաշխատողների հավելավճար	600,000
	Գիտական սարքերի և նյութերի ձեռքբերում	684,000
	Երիտասարդ գիտնականների դպրոց	430,400
	Երիտասարդ գիտն. տպագրված հոդված	330,700
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Օլիպիա ՍՊԸ	250,000
	Ավրորա հիմնադրամ	4,853,200
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Գանձանակից մուտքեր	1,232,710
	Գրքերի և տոմսերի վաճառքից մուտքեր	14,980,000
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
	0	0
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Գիտական և գիտատեխնիկական գործունեության ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտի պահպանում	230,610,990	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	230,610,990	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	230,610,990	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ ___7____թերթից:

թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Digitally signed by GHARAGYOZYAN SATENIK
5809870120

Ֆինանսական հաշվետվություններ
Անկախ աուդիտորական եզրակացություն
2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ

« ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ » Հիմնադրամ

Երևան – 2022

«Հայոց ցեղասպանության թանգարան-
ինստիտուտ» հիմնադրամ
Հայաստանի Հանրապետություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

«Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0038, Հալաբյան 5/6
5/6 Halabyan str., Yerevan 0038, RA
Հեռ/Tel: (+374 10) 399-855

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2021թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվների փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք

բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Հաստատված է
«Զի ընդ Քո. Աուդիտ Գրուպ» ՍՊԸ

Տնօրեն/աուդիտոր Լ.Պողոսյան

«20» հունիսի 2022թ.
Երևան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ

2021թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ

ԱԿՏԻՎՆԵՐ	Ծանոթագրություններ	31/12/2021 ₽ 000	31/12/2020 ₽ 000
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	131,728,728	131,807,263
Ոչ նյութական ակտիվներ		153	199
Հետաձգված հարկային ակտիվ		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**131,728,881**	**131,807,462**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	5	28,587	28,296
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր		376	2,866
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	21,035	56,733
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**49,998**	**87,895**
Ընդամենը ակտիվներ		**131,778,879**	**131,895,357**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ			
Զուտ ակտիվներ			
Կուտակված հավելաճ (չծածկված վնաս)		26,830	(341)
Ընդամենը զուտ ակտիվներ		**26,830**	**(341)**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	7	131,727,088	131,807,263
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**131,727,088**	**131,807,263**
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	8	9,696	8,263
Եկամուտներին վերաբերվող շնորհներ	9	5,576	69,021
Պահուստներ	10	9,690	11,151
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**24,961**	**88,435**
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		**131,778,879**	**131,895,357**

10-ից 24-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Հարություն Սարության

Գլխավոր հաշվապահ
Սաթենիկ Ղարագյոզյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ

2021թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծանոթագրություններ	2021 դրամ 000	2020 դրամ 000
Եկամուտ ճանաչված շնորհներ	11	328,007	284,840
Հասույթ	12	15,033	1,886
Այլ եկամուտներ		217	1,861
Ընդամենը եկամուտներ		343,257	288,587
Աշխատակիցների հատուցումների գծով ծախսեր	13	(181,175)	(168,631)
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր		(83,995)	(82,994)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		(20,143)	(15,638)
Այցիների բարեկարգման և խնամքի ծախսեր		(5,730)	(6,809)
Վաճառված ապրանքների ինքնարժեք		(5,447)	(601)
Հեռահաղորդակցության ծախսեր		(848)	(901)
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր		(1,646)	(545)
Հիմնական միջոցների նորոգման, սպասարկման ծախսեր		(370)	(430)
Այլ ծախսեր	14	(16,731)	(5,938)
Ընդամենը ծախսեր		**(316,086)**	**(282,487)**
Տարվա արդյունք մինչև հարկումը		**27,171**	**6,100**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	15	-	(1,563)
Տարվա արդյունք հարկումից հետո		**27,171**	**4,537**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Զուտ ակտիվներում ճանաչված օգուտներ (վնասներ)		-	-
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		**27,171**	**4,537**

10-ից 24-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Հարություն Սարգսյան

Գլխավոր հաշվապահ
Սաթենիկ Ղարագյոզյան

Զուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվություն
«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ
2021թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

դ 000

	Կուտակված հավելաճ (Չծածկված վնաս)	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**(4,878)**	**(4,878)**
Տարվա հավելաճ	4,537	4,537
	-	
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**(341)**	**(341)**
Տարվա հավելաճ	27,171	27,171
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**26,830**	**26,830**

10-ից 24-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրեն
Հարություն Սարգսյան

Գլխավոր հաշվապահ
Սաթենիկ Ղարագյոզյան

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը հետևյալն է.

Արայիկ Հարությունյան	ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական
Զարեհ Սինանյան	Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար
Վլադիմիր Վարդանյան	Ազգային ժողովի պատգամավոր (համաձայնությամբ)
Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյան	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Պետրոս վարդապետ Մանուկեան	Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Աշոտ Մելքոնյան	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն (համաձայնությամբ)
Սամվել Կարաբեկյան	- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի խորհրդական
Վահրամ Տեր-Մաթևոսյան	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող (համաձայնությամբ)
Հրանուշ Խառատյան	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող (համաձայնությամբ)
Ռիչարդ Հովհաննիսյան	«UCLA, Armenian genocide studies»-ի հիմնադիր (համաձայնությամբ)
Ռայմոնդ Գևորգյան	Ֆրանսիահայ պատմաբան, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ (համաձայնությամբ)
Ռուբեն Մելքոնյան	Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դեկան (համաձայնությամբ)
Անի Ավագյան	«ICOM ARMENIA»-ի (International Council of Museums) նախագահ (համաձայնությամբ)
Սարգիս Հայոցյան	- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ
Վազգեն Յակուբյան	- ՀԲԸՄ-ի Հայաստանի նախագահ (համաձայնությամբ)

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 13.08.2022 22:40